Կարգապահական գործ թիվ ԿԳ-26004

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՆԻԿՈԼԱՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Գուրգեն Թորոսյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Քրիստինե Նիկոլայի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 3333) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.

«ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդգես Գասպարին (**այսուհետ՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)**, հայտնել է, որ 18.01.2024թ. Փաստաբանի հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն վերջինս պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը «Գլոբալ Աքսես ընկերության կողմից պարտավորությունները չկատարելու հարցի շրջանակներում:

Ըստ Դիմողի՝ ծառայությունների դիմաց Փաստաբանին վճարվել է 300.000 ՀՀ դրամ:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում, որը քննիչի որոշմամբ մերժվել է: Փաստաբանը քննիչի որոշման թղթային տարբերակը ստանալուց հետո հայտնել է Դիմողին, որ բողոքարկման ժամկետները ցաց

Թիվ ԿԳ-26004-2-Ա
20.05.2026թ.

են թողնված:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը հայց է ներկայացրել ընդդեմ «Գլոբալ Աքսես» ընկերության, սակայն դատարանի 11.03.2025թ. որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության, քանի որ պատշաճ ծանուցված Հայցվորը և նրա ներկայացուցիչը 14.11.2024թ. և 11.03.2025թ. նշանակված դատական նիստերին չեն մասնակցել:

Դիմողը նշել է, որ դատարանի 11.03.2025թ. որոշման մասին Փաստաբանը տեղեկացրել է ավելի քան չորս ամիս ուշացումով, իսկ որոշումը տրամադրել է ավելի քան վեց ամիս ուշացումով:

Դիմողը նշել է, որ այդ ողջ ընթացքում Փաստաբանը դրսևորել է անփույթ վարքագիծ, անպատասխանատու կեցվածք և Դիմողի բազմաթիվ դիմումները թողել է անպատասխան:

Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և փաստաբան Քրիստինե Պետրոսյանին ենթարկել պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 18.03.2026թ. Դիմողին առաջարկվել է համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը հայտնել է, որ բողոքին կից արդեն իսկ ներկայացրել է իր մոտ գտնվող բոլոր նյութեր և լրացուցիչ որևէ ապացույց իր մոտ առկա չէ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Քրիստինե Պետրոսյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Վարդգես Գասպարիի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ բացատրություն և ապացույց չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 18.03.2026 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը որևէ բացատրություն և (կամ) ապացույց չի ներկայացրել և կարգապահական հանձնաժողովի նիստին չի մասնակցել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 12.02.2026թ. թիվ 94-Ա/ԿԳ-26004 որոշմամբ Փաստաբանի

նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

13.02.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 13.04.2026թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-ից 6-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 13.04.2026թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել՝ 20.05.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Քրիստինե Պետրոսյանը ստանձնել է Դիմող «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդգես Գասպարիի իրավունքների պաշտպանությունը թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործով «Datalex» դատական տեղեկատվական համակարգի տվյալներով:*

2. Փաստաբանը թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործով «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության անունից հայց է ներկայացրել ընդդեմ «Գլոբալ Աքսես» ՍՊ ընկերության գումար բռնագանձելու պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործով «Datalex» դատական տեղեկատվական համակարգի տվյալներով, ինչպես նաև փաստը հաստատվում է Դիմողի ներկայացրած թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործով «Հայցն առանց քննության թողնելու մասին» դատարանի 11.03.2025թ. որոշմամբ:*

3. Դատարանի 11.03.2025թ. որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության,

քանի որ պատշաճ ծանուցված Հայցվորը և նրա ներկայացուցիչը 14.11.2024թ. և 11.03.2025թ. նշանակված դատական նիստերին չեն մասնակցել: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի ներկայացրած թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործով «Հայցն առանց քննության թողնելու մասին» դատարանի 11.03.2025թ. որոշմամբ:*

4. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը նաև քրեական գործի շրջանակներում և համապատասխան հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի բաժին: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի բաժնի ավագ քննիչ Դ. Գևորգյանի գրությամբ:*

5. Փաստաբանի ներկայացրած հաղորդման քննարկման արդյունքում քրեական վարույթ չի նախաձեռնվել, քանի որ հաղորդումը չի համապատասխանել ՀՀ քրեական դատավարության 173-րդ հոդվածի պահանջներին: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի բաժնի ավագ քննիչ Դ. Գևորգյանի գրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Քրիստինե Պետրոսյանը փաստաբան է հանդիսանում 06.12.2022 թվականից, և 2022-2026թթ ընկած ժամանակահատվածում չի ունեցել կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Քրիստինե Պետրոսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի*

պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հետևանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, փաստաբան Քրիստինե Պետրոսյանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու և իրեն հետաքրքրող հարցերին չպատասխանելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***արդյո՞ք փաստաբան Քրիստինե Պետրոսյանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին,***
- ***արդյո՞ք փաստաբան Քրիստինե Պետրոսյանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր իր վստահորդի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար,***
- ***արդյո՞ք փաստաբան Քրիստինե Պետրոսյանը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:***

7.1 <u>Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման մասով</u>

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

*1) ազնվորեն և **բարեխղճորեն** պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.*

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին **բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ** իր մասնագիտական կարողությունների սահմաններում, **ինչը ենթադրում է** իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, **հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է*

վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, ***բարեխղճորեն****, որակավորված, սկզբունքայնորեն և* ***ժամանակին****, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Համադրելով Օրենքի և Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Հանձնաժողովը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման

համար:

Սույն կարգապահական գործում առկա ապացույցներից, ինչպես նաև Դիմողի բացատրություններից պարզ է դառնում, որ Փաստաբանը ստանձնել է Դիմող «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդգես Գասպարիի իրավունքների պաշտպանությունը թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում: Կարգապահական վարույթի նյութերից հետևում է, որ Փաստաբանը ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության անունից հայց է ներկայացրել ընդդեմ «Գլոբալ Աքսես» ՍՊ ընկերության գումար բռնագանձելու պահանջի մասին:

Դիմողի ներկայացրած թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործով «Հայցն առանց քննության թողնելու մասին» դատարանի 11.03.2025թ. որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության և արձանագրվել է, որ **պատշաճ ծանուցված Հայցվորը և նրա ներկայացուցիչը 14.11.2024թ. և 11.03.2025թ. նշանակված դատական նիստերին չեն մասնակցել:**

Հանձնաժողովը հաստատված համարելով Փաստաբանի կողմից դատական նիստերին չմասնակցելու հանգամանքը, արձանագրում է, որ վերջինս, ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը և ներկայացնելով հայցադիմումը, պարտավոր էր հետագա ընթացակարգային գործողությունները կատարել այնպիսի բարեխղճությամբ և հետևողականությամբ, որը կապահովեր վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը:

Մասնավորապես, գործի նյութերից հետևում է, որ Փաստաբանը, պատշաճ ծանուցված լինելով 2024 թվականի նոյեմբերի 14-ին և 2025 թվականի մարտի 11-ին նշանակված դատական նիստերի մասին, չի ներկայացել դրանց, իսկ գործի նյութերը չեն պարունակում որևէ ապացույց այն մասին, որ նրա բացակայությունը պայմանավորված է եղել հարգելի պատճառներով կամ որ վերջինս նախապես ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ դատական նիստի հետաձգման, իր բացակայության պատճառների մասին դատարանին տեղեկացնելու կամ վստահորդի շահերի պատշաճ ներկայացումն այլ եղանակով ապահովելու ուղղությամբ:

Արդյունքում, դատարանը, կիրառելով քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքը, 2025 թվականի մարտի 11-ի որոշմամբ հայցը թողել է առանց քննության՝ հիմք ընդունելով, որ պատշաճ ծանուցված հայցվորը և նրա ներկայացուցիչը երկու դատական նիստերին չեն ներկայացել:

Հանձնաժողովի գնահատմամբ, Փաստաբանի վերոնշյալ վարքագիծը չի համապատասխանում այն մասնագիտական վարքագծի չափանիշներին: Դատական նիստերին առանց հիմնավորված պատճառի չներկայանալը և դրան հետևանքով վստահորդի ներկայացրած հայցի՝ առանց քննության թողնվելը վկայում է այն, որ

Փաստաբանը չի կատարել վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, չի իրականացրել վստահորդի շահերի բարեխիղճ և ժամանակին պաշտպանությունը և չի ապահովել իրավաբանական օգնության այն որակը, որը պարտավոր էր ցուցաբերել իր մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում:

Ուստի Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը չի գործել ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն, հետևապես՝ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի պահանջների խախտման հատկանիշներ:

Անդրադառնալով Փաստաբանի ցուցաբերած իրավական օգնության բարեխղճության հարցին՝ հարկ է նաև արձանագրել, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը նաև քրեական գործի շրջանակներում և համապատասխան հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի բաժին:

Փաստաբանի ներկայացրած հաղորդման քննարկման արդյունքում քրեական վարույթ չի նախաձեռնվել, քանի որ հաղորդումը չի համապատասխանել ՀՀ քրեական դատավարության 173-րդ հոդվածի պահանջներին:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից ցուցաբերված իրավաբանական օգնության բարեխղճության հարցին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը նաև քրեական վարույթի շրջանակներում և վերջինիս անունից հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

Կարգապահական վարույթի նյութերից հետևում է, որ ներկայացված հաղորդման քննարկման արդյունքում քրեական վարույթ չի նախաձեռնվել, քանի որ հաղորդումը չի համապատասխանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի պահանջներին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ որոշումն օրենքով սահմանված կարգով ենթակա էր բողոքարկման՝ ինչպես հսկողություն իրականացնող դատախազին, այնպես էլ դատական կարգով: Նշված բողոքարկման ընթացակարգերը նախատեսված են անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոցներ ապահովելու նպատակով և, համապատասխան հանգամանքների առկայության դեպքում, կարող են հանգեցնել ընդունված որոշման վերանայման:

Մինչդեռ կարգապահական վարույթի նյութերը չեն պարունակում որևէ ապացույց այն

մասին, որ Փաստաբանը բողոքարկել է քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ որոշումը, նախաձեռնել է դրա վերանայմանն ուղղված այլ իրավաչափ գործողություններ կամ առնվազն պատշաճ կերպով իրազեկել է վստահորդին նման բողոքարկման հնարավորության, դրա ժամկետների և իրավական հետևանքների մասին:

Հանձնաժողովը չի արձանագրում, որ յուրաքանչյուր դեպքում փաստաբանը պարտավոր էր պարտադիր բողոքարկել քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ որոշումը: Սակայն փաստաբանը, որպես վստահորդի շահերի պաշտպան, պարտավոր էր առնվազն վստահորդին պարզաբանել որոշման բովանդակությունը, բողոքարկման հնարավորությունը, դրա ժամկետները, չբողոքարկելու իրավական հետևանքները և վստահորդի հետ համաձայնեցնել հետագա հնարավոր իրավաչափ քայլերը: Գործի նյութերում նման տեղեկացման կամ համաձայնեցման վերաբերյալ ապացույց առկա չէ:

Հանձնաժողովի գնահատմամբ, նշված անգործությունը, գնահատվելով գործի մյուս հանգամանքների հետ համակցությամբ, վկայում է, որ Փաստաբանը չի ձեռնարկել վստահորդի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար օրենքով նախատեսված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ միջոցները, ինչը չի համապատասխանում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետով փաստաբանի վրա դրված՝ հանձնարարությունը բարեխղճորեն, որակավորված և լիարժեք կատարելու պարտականություններին:

7.2 Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Սույն կանոնից բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Նշված պարտականությունն իր բնույթով սերտորեն փոխկապակցված է Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետով սահմանված պահանջների հետ, քանի որ վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացնելու պարտականությունը ենթադրում է, որ փաստաբանը նախ իրականացնում է հանձնարարությունից բխող համապատասխան գործողություններ, ձևավորում է որոշակի ընթացք, և միայն դրանից հետո

ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ է հաղորդում վստահորդին:

Այլ կերպ, վստահորդին գործի ընթացքի մասին տեղեկացնելը չի հանդիսանում փաստաբանի գործունեությունից առանձնացված պարտականություն, այլ հանդիսանում է նրա կողմից իրականացվող իրավաբանական օգնության բնական և անհրաժեշտ բաղադրիչը: Հետևաբար, երբ փաստաբանը չի կատարում հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ, նա ոչ միայն չի ապահովում վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, այլ նաև չի ստեղծում այնպիսի փաստական և իրավական ընթացք, որի մասին կարող էր կանոնավորապես տեղեկացնել վստահորդին:

Սույն գործով արդեն արձանագրվել է, որ Փաստաբանի կողմից չեն ներկայացվել ապացույցներ առ այն, որ վերջինս կատարել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում որևէ առարկայական գործողություն՝ մասնակցել դատական նիստերին, ներկայացրել բողոքներ կամ այլ կերպ գործնականում ձեռնարկել վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված միջոցներ: Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից փաստացի չի ձևավորվել հանձնարարության կատարման այնպիսի ընթացք, որի վերաբերյալ հնարավոր լիներ վստահորդին պարբերաբար և բովանդակային կերպով տեղեկացնել:

Ավելին, Դիմողը նշել է, որ դատարանի 11.03.2025թ. որոշման մասին Փաստաբանը տեղեկացրել է ավելի քան չորս ամիս ուշացումով, իսկ որոշման պատճենը տրամադրել է ավելի քան վեց ամիս ուշացումով:

Դիմողի ներկայացրած նամակագրություններից ուղղակիորեն հետևում է, որ դատարանի 11.03.2025թ. «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշման վերաբերյալ Փաստաբանը Դիմողին տեղեկացրել է միայն 19.07.2025թ., այսինքն՝ որոշման կայացումից ավելի քան չորս ամիս անց: Միաժամանակ, Փաստաբանի կողմից չեն ներկայացվել որևէ ապացույցներ, որոնք կհաստատեին, որ նա մինչև այդ պահը որևէ եղանակով տեղեկացրել է վստահորդին գործի ընթացքի, կայացված դատական ակտի կամ դրա իրավական հետևանքների մասին, ինչպես նաև չեն ներկայացվել ապացույցներ, որոնք կհիմնավորեին նման ուշացման օբյեկտիվ կամ հարգելի պատճառների առկայությունը:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ դատարանի կողմից ընդունված և վստահորդի իրավունքների ու օրինական շահերի վրա անմիջական ազդեցություն ունեցող դատական ակտի մասին միայն մի քանի ամիս անց տեղեկացնելը չի կարող համարվել Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետով նախատեսված՝ վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավոր և ժամանակին տեղեկացնելու պարտականությանն պատշաճ կատարում:

Հետևաբար, վերոնշյալ հանգամանքների համակցված գնահատմամբ Հանձնաժողովը

հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանը չի կատարել նաև Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետով իր վրա դրված պարտականությունը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է նկատողություն տույժի տեսակը ընտրելու առանձին երկու հիմք:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները: Հանձնաժողովը բազմակողմանի ուսումնասիրել է ստանձնած գործերի շրջանակներում Փաստաբանի կողմից իրականացրած գործողությունները և թույլ տված խախտումները: Հաշվի առնելով նշվածը, Հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում

ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Քրիստինե Նիկոլայի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 3333) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26004-2-Ա
20 մայիսի 2026թ.
ք.Երևան